

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 23-ԻՆ ԺԱՄԸ 15:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ`

Տ. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Վ. Ռազրոզ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հայաստանյան գրասենյակի ղեկավար
Գ. Պողոսյան	«Գործարար շահերի պաշտպանության ցանց» ՀԿ-ի համակարգող
Կ. Գալաստյան	«Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ» ՀԿ-ի գործադիր տնօրեն
Կ. Մարտիրոսյան	Երևանի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն

Մասնակիցներ`

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ս. Կարայան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Ալավերդյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ա. Գրիգորյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Դ. Միրզոյան	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Երևանի գրասենյակի ներկայացուցիչ
Վ. Կարապետյան	«ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի գործադիր տնօրեն
Ա. Եզանյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ՓՄՁ

զարգացման վարչության պետ

Ա. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական առաջատար մասնագետ
Վ. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ
Հ. Ավագյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Լ. Խալաթյան	թարգմանիչ

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների մասին

(Հ. Ավագյան, Վ. Կարապետյան, Գ. Պողոսյան, Ա. Ալավերդյան, Ս. Կարայան, Տ. Սարգսյան)

7. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) Ընդունել ի գիտություն, որ արտոնագրային վճարումների բնագավառում առաջարկվում են որոշակի ճշգրտումներ և նորամուծություններ, որոնք էապես կհեշտացնեն փոքր և միջին բիզնեսի գործունեությունը, մասնավորապես՝

ա. հնարավորություն ընձեռել հարկ վճարողներին արտոնագրային վճարները կատարել նաև ամսեկան պարբերականությամբ, ինչպես նաև եռամսյա, վեցամսյա, իննամսյա կամ տասներկուամսյա ժամանակահատվածների համար ձեռք բերվող արտոնագրերի համար սահմանել արտոնագրային վճարի՝ ամսական դրույքաչափերից ավելի ցածր դրույքաչափեր,

բ. հանրային սննդի ոլորտում՝ մինչև 50 քառ. մետր տարածքի համար նախատեսված՝ արտոնագրային վճարի նվազագույն չափը տարանջատել մինչև 20 քառ. մետր և 21-50 քառ. մետր տարածքների համար արտոնագրային վճարների չափերի, ինչը հնարավորություն կտա հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող գերփոքր մինչև 20 քառ. մետր տարածք ունեցող տնտեսավարող սուբյեկտներին գործող կարգի համեմատ 2.5 անգամ ավելի պակաս արտոնագրային վճար վճարել,

գ. բնակության միևնույն հասցեում գրանցված (հաշվառված) անձանց հնարավորություն տալ՝ միևնույն թեթև մարդաստար ավտոմեքենայով ուղևորափոխադրման գործունեությունն իրականացնել մեկ արտոնագրով,

դ. վերանայելով 2012 թվականի երկրորդ եռամսյակի համար արտոնագրային վճարների վճարման վերջնաժամկետները՝ հնարավորություն ընձեռել 2012 թվականի երկրորդ եռամսյակի համար արտոնագրային վճարը կատարել եռամսյա ժամանակահատվածի համար առաջին արտոնագրի գործողության ժամկետում՝ մինչև 2012 թվականի հունիսի 1-ը ներառյալ,

ե. հնարավորություն տալ սեփական մեքենա ունեցող անհատ ձեռներեցներին մեքենայի տեխզննում անցկացնել տարեկան ոչ թե երկու, այլ մեկ անգամ.

2) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանին և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին՝

ա. «ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի գործադիր տնօրեն Վ. Կարապետյանի առաջարկությանը համապատասխան՝ համատեղ քննարկել հանրային սննդի ոլորտում 21-50 քառ. մետր տարածքների համար 50 քառ. մետրից ավելի տարածքի համար սահմանված մեթոդի կիրառման հնարավորության հարցը,

բ. քննարկել արտոնագրային վճարների ներքո գործող հանրային սննդի ոլորտի խոշոր օբյեկտները ընդհանուր հարկման դաշտ տեղափոխելու հարցը,

գ. քննարկել ԱԱՀ վճարող՝ 58.350 մլն դրամից ցածր տարեկան շրջանառություն ունեցող իրար փոխկապակցված (որոնք իրար փոխկապակցված են բաժնեհավաք, կամ կանոնադրական կապիտալի 20 տոկոս և ավելի չափով) ընկերություններին և անհատ ձեռնարկատերերին ԱԱՀ-ի վճարումից ազատելու հնարավորության, նպատակահարմարության հարցերը, ինչպես նաև դրանից բխող ռիսկայնության աստիճանը,

դ. քննարկումների ամփոփված արդյունքների հիման վրա լրամշակել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը և համապատասխան ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի հետ միասին ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը՝ նշված նորմերի կիրարկումն ապահովելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ